

ԷԿՈԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՇԱՀ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԱՂԻԼԽԱՆՅԱՆ , ԶԱՐԻԿ ԱՂԱԶՆՅԱՆ ^{*}
Երևանի պետական համալսարան

Հոդվածում անդրադարձ է կատարվում լեզվաբանության նոր ուղղության՝ էկոլեզվաբանության խնդիրներին: Լեզուն՝ իբրև ազգային գոյաբանական համակարգ, իբրև ազգային մտածողության բանաձև, պայմանավորված է ոչ միայն լեզվակիր անհատի լեզվամտածողությամբ և աշխարհայացքով, այլև լեզու-մարդ-միջավայր փոխհարաբերությամբ ու փոխազդեցություններով: Այդ բազմաբարդ շղթայում շրջակա միջավայրն իր անմիջական ազդեցությունն է թողնում մարդու խոսքային գործունեության վրա: Բնականաբար, եթե խոսվում է բնության էկոհամակարգի պահպանման մասին, պետք է ուշադրություն դարձնել նաև էկոհամակարգի կազմիչներից մեկի՝ մարդու բնածին ունակության՝ լեզվի մաքրությանը և պահպանությանը: Լեզվի էկոլոգիան նման է շրջակա միջավայրի էկոլոգիային՝ երկու դեպքում էլ իբրև շարժիչ ուժ ունենալով ներդաշնակության պահպանման, բարեշրջման օրենքների անխախտ գործառությունը:

21-րդ դարում անհրաժեշտություն է բարձրաձայնել լեզվամտածողության նոր տեսակի՝ **էկոլոգիական լեզվամտածողության** մասին, որը ենթադրում է լեզուն դիտարկել որպես անփոխարինելի բաղադրիչ **մարդու-հասարակության-բնության** միջև: Այս դեպքում լեզվի էկոլոգիան վերածվում է սոցիալական և բացասական (նեգատիվ) ազդեցություններից լեզվի պաշտպանության գործիքի: Էկոլեզվաբանությունն ուսումնասիրում է հենց լեզվի աղտոտման աղբյուրները, կնճռոտ խնդիրներին լուծումներ գտնելու ուղիները: Այն կոչված է տալու լեզվի զարգացման օբյեկտիվ պատկերը, լեզվակիր հասարակությանը զգուշացնելու լեզվին սպառնացող վտանգների, նրա աղտոտվածության մասին և այս կերպ խնամք ու

^{*} **Անահիտ Աղիլխանյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Анаит Адилханян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Anahit Adilkhanyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ adilkhanyanahit@ysu.am <https://orcid.org/0009-0006-0917-4586>

Զարիկ Աղաջանյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Зарик Агаджанян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Zarik Aghajanyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ aghajanyanzarik@ysu.am <https://orcid.org/0009-0002-6573-3777>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.04.2025
Գրախոսվել է՝ 30.04.2025
Հաստատվել է՝ 02.06.2025
© The Author(s) 2025

հոգատարություն ցուցաբերելու գրական լեզվի ճակատագրի, մարդու և հասարակության խոսքային միջավայրի հանդեպ:

Բանալի բառեր – *էկոլեզվաբանություն, էկոլոգիական լեզվամտածողություն, մարդ, հասարակություն, բնություն, լեզվակիր անհատ, խոսքի և լեզվի էկոլոգիա, շարժիչ ուժ, ներդաշնակություն*

Լեզուն՝ իբրև ազգային գոյաբանական համակարգ, իբրև ազգային մտածողության բանաձև, պայմանավորված է ոչ միայն լեզվակիր անհատի լեզվամտածողությամբ և աշխարհայացքով, նրա գիտակրթական ներուժի ու քաղաքակրթվածության մակարդակով, բարոյահոգեբանական որակներով, խոսքիմշակութային արժեհամակարգով, այլև **լեզու-մարդ-միջավայր** փոխհարաբերություններով և փոխազդեցություններով: Այդ բազմաբարդ շղթայում շրջակա միջավայրն իր անմիջական ազդեցությունն է թողնում մարդու խոսքային գործունեության վրա: Դեռ 20-րդ դարասկզբին գերմանացի լեզվաբան Վայսգերբերը, սահմանելով լեզվի երեք օրենքները՝ **ա. լեզվական հանրության, բ. մայրենի լեզվի**, այն է՝ **անհատի լեզվի**, և **գ. լեզվով պայմանավորվող գոյի**, եզրակացրել է. «Լեզուն, resp. մայրենի լեզուն ոգի ստեղծող ուժ է, որ որոշիչ դեր է խաղում մարդու աշխարհըմբռնման մեջ, հնարավորություն է տալիս արտաքին իրականությունը ձևավոխելու և ենթարկելու ոգուն»¹:

Ընդհանուր գիտաբանության մեջ տարածված է այն կարծիքը, որ խոսելու կարողությունը (լեզուն), ինչպես տեսողությունն ու լսողությունը, մարդուն տրված են բնությունից: Բնականաբար, եթե խոսվում է բնության էկոմաքրության և էկոպահպանության մասին, ուրեմն վերջինս պետք է ներառեր և իր էկոմասնիկներից մեկի՝ մարդու բնական՝ բնածին ունակության՝ լեզվի մաքրության և պահպանության հարցերը: Անցյալ դարի 70-ական թվականներից լեզվաբանական գիտությունների համակարգը հարստացավ նոր գիտաճյուղով, որն անվանվեց **էկոլեզվաբանություն**: Իր էկոլոգիական և լեզվաբանական խնդիրների բազմաբարդ համաձուլվածքով այն նույնպես կառուցվում է մարդակենտրոն համակարգի շուրջը՝ նպատակաուղղված լեզվի և այդ լեզուն գործածողների միջավայրի փոխհարաբերության ուսումնասիրությանը:

Ծագումնաբանական հենքը **էկոլոգիա** գիտությունն է, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների, դրանց համախմբերի փոխազդեցությունները միմյանց և իրենց շրջապատող միջավայրերի միջև: Սկզբնական շրջանում առավելապես զբաղվելով շրջակա միջավայրի բնապահպանական խնդրահարույց հարցերով՝ հետագայում իմաստի ընդլայնմամբ սկսում է տարածվել բնական և անգամ հասարակական գիտությունների վրա այն պարզ տրամաբանությամբ, որ շրջակա (էկոլոգիական) միջավայրը ազդում է հասարակության և

¹ Մեջբերումն ըստ **Ջահուկյան, Գ. Բ.** Լեզվաբանության պատմություն, 2 հատորով, հ. 2, Եր., 2015, էջ 350:

անհատի կենսագործունեության, ներառյալ և լեզվական վարքագծի վրա: «Էկոլոգիա» գիտության ճյուղավորման արդյունքում (**սոցիալական էկոլոգիա, մարդու էկոլոգիա, անտառի էկոլոգիա, ջրային ռեսուրսների էկոլոգիա, լեռնային համակարգերի էկոլոգիա** և այլն) էկոգիտական համակարգում սաղմնավորվեց «լեզվի էկոլոգիա» գիտաճյուղը, որը հետագայում **հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության և լեզվափիլիսոփայության, հասարակագիտության, քաղաքագիտության** խաչավորման առանցքում ամրակայվեց «**էկոլոգիական լեզվաբանություն**» կամ «**էկոլեզվաբանություն**» տերմինակապակցությամբ: Էկոլոգիական և լեզվաէկոլոգիական հարցերով զբաղվող գիտնականները «**էկոլոգիա**» հասկացության բովանդակությունը ներկայացնելու համար ամենից առաջ մեջբերում են «խնամք», «անվտանգություն», «պահպանում», «պաշտպանություն», «առողջացում», «մաքրություն» հասկացությունները՝ կարևորելով այն հարցերը, թե ի՞նչ ուղղություններով են առաջադրվում պաշտպանության և պահպանության հարցերը, ի՞նչը կամ ինչն են ազդում լեզվի վրա, կամ՝ որտե՞ղ են դժվարությունները, ի՞նչ լուծումներ գտնել և ինչպե՞ս: Այն, որպես մարդու և հասարակության բնակավայրի լեզվամիջավայրն ուսումնասիրող նոր գիտաճյուղ, որդեգրեց էկոլոգիական օրենքներ, սկզբունքներ ու օրինաչափություններ, կանոններ, որոնք հատկանշվեցին երկգործառությամբ՝ **էկոլոգիական և լեզվաբանական**, ուսումնասիրեց նաև լեզվի դերը շրջակա միջավայրի և բնապահպանական խնդիրների (պրոբլեմների) հնարավոր լուծումներ գտնելու գործում:

Լեզվի էկոլոգիան նման է շրջակա միջավայրի էկոլոգիային՝ երկու դեպքում էլ իբրև շարժիչ ուժ ունենալով **ներդաշնակության** կամ **հավասարակշռության պահպանման, բարեշրջման** օրենքների անխախտ գործառությունը: Ինչպես բնության մեջ ամեն ինչ փոխվում է ժամանակի հետ, այնպես էլ լեզվում են կատարվում նույնատիպ փոփոխություններ, որոնք պայմանավորված են արտաքին միջավայրի ազդեցությամբ, բնական և բնափոխական, հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով: Հետևաբար՝ աններդաշնակությունն ու հետընթացը, աղտոտումն ու խախտումը, շեղումն ու եղծումը էկոլոգիական ճգնաժամի (անգամ աղետի) պատճառ են դառնում: Այս խնդրին անդրադարձել են նաև ռուս լեզվաբանները՝ նշելով, որ «...բնության աղտոտման և լեզվի աղտոտման, բնության պաշտպանության ու լեզվի պաշտպանության, բնության պաշարների ու լեզվական պաշարների, կենդանի բնության ու կենդանի լեզվի, բնապահպանական գիտակցության ու լեզվապահպանման գիտակցության, խոսքի մշակույթի էկոլոգիայի ու բնության էկոլոգիայի, բնության հավասարակշռության խախտման ու լեզվական համակարգի հավասարակշռության խախտման, բնության վրա այլ գործոններ

րի ազդեցության և լեզվի մեջ ոճական խախտման և այլ գործոնների ազդեցության պատճառներով է խախտվել ներդաշնակությունը Խոսող Մարդու և Բնության փոխազդեցությունների միջև»²:

Ըստ օտարալեզու աղբյուրների՝ «Էկոլոգիա» տերմինը լեզվաբանություն է ներմուծել **Ջոն Փրինոն**, առավել տարածվել է ամերիկյան հանրալեզվաբանության (սոցիոլինգվիստիկայի) հանրահայտ ներկայացուցիչ **Էյնար Հատուգենի** «Լեզվի էկոլոգիա» գրքի շնորհիվ (1972 թ.): Ըստ նրա՝ էկոլոգիայի առարկան տվյալ լեզվի վրա հոգեբանական ու սոցիալական իրադրությունների թողած ազդեցությունների և հետևանքների ուսումնասիրությունն է: Նա առաջինն էր, որ ձևակերպեց լեզվի էկոլոգիայի պրոբլեմները՝ որպես առանձին ուղղության, և գիտականորեն հաստատեց, որ այն ձևավորվել է **էկոլոգիա** գիտության դասական հասկացությունների փոխաբերացման ճանապարհով: Դրանցից մեկն այն է, որ էկոլոգիական միջավայրում կենսաբանական տիպերը ծնվում են, աճում են, փոփոխվում, ապրում ու մահանում են այլ տիպերի և բնական միջավայրի հետ ունեցած փոխազդեցությունների արդյունքում: Լեզուներն էլ նման են այդ կենսաբանական էակներին. ծնվում են, աճում, զարգանում և մահանում են լեզվամիջավայրի ազդեցությամբ և այլ լեզուների հետ ունեցած փոխազդեցություններում, ուստի և լեզվի էկոլոգիան (էկոլեզվաբանությունը) պետք է լուծի այս խնդիրները, առաջարկի լեզուների մահը կանխարգելող լուծումներ:

Իսկ «լեզվաբանական էկոլոգիա» տերմինակապակցությունը կիրառվել է **Չարլզ և Ֆլորենս Վյոգլինների** կողմից, ովքեր առաջարկում էին էկոլեզվաբանական քննությունն սկսել ոչ կոնկրետ լեզվից, այլ որոշակի տարածքում գործառվող բոլոր լեզուների փոխազդեցական հիմնահարցերից: Նրանք գրում են. «Լեզվի էկոլոգիայի ուսումնասիրությունը պետք է սկսել ոչ թե կոնկրետ լեզվից, այլ որոշակի տարածքից, ոչ թե ընտրովի ուշադրություն դարձնել մի քանի լեզուների, այլ ուշադրությունը կենտրոնացնել այդ տարածքում ներկայացված բոլոր լեզուներին»³: Այնուհետև նշվում է, որ «էկոլեզվաբանություն» եզրույթը շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի **Կլոդ Ագելինը**:

Ավստրիացի լեզվաբան **Ալվին Ֆիլլը** սահմանել է էկոլեզվաբանության տարբեր ենթաճյուղերն անվանող տերմինները՝

էկոլեզվաբանություն – ընդհանուր տերմին բոլոր ոլորտների ուսումնասիրության համար, որով միավորվում են էկոլոգիան և լեզվաբանությունը,

լեզվի էկոլոգիա – ուսումնասիրում է լեզուների միջև փոխհարաբերությունները՝ լեզվաբանական բազմազանությունը պահպանելու նպատակով,

² **Шляхов, В. И., Никонов, А. Л.** Эколингвистика и проблема экологии языка в российском языковом пространстве // Пространство и Время. 2011. № 4 (6). С. 140.

³ **Нурушева, Д. А.** Эколингвистика как раздел языкознания // Фундаментальные исследования. 2014. № 5 (часть 4). С. 890-893.

Էկոլոգիական լեզվաբանություն – զբաղվում է լեզվաբանության մեջ էկոլոգիական տերմինների և սկզբունքների ներմուծմամբ (օրինակ՝ **Էկոհամակարգեր** հասկացությունը),

լեզվաբանական (լեզվական) էկոլոգիա – ուսումնասիրում է լեզուների միջև փոխազդեցությունների և էկոլոգիական հարցերը⁴:

Հետագա զարգացման ընթացքում առանձնացվեցին էկոլոգիական լեզվաբանության տարբեր ենթաճյուղեր՝ **լեզվաբանության էկոլոգիա**, **խոսքի էկոլոգիա**, **լեզվի էկոլոգիա**, **լեզվական միջավայրի էկոլոգիա**, **բառի էկոլոգիա**, **նախադասության էկոլոգիա**, **ժուռնալիստիկական էկոլոգիա**, **դիվանագիտական էկոլոգիա** և այլն:

21-րդ դարում լեզվի մշակույթը ներառված է մշակույթի էկոլոգիայի համատեքստում՝ որպես նրա կարևոր բաղադրիչ: Այսօր արդեն անհրաժեշտություն է բարձրաձայնել լեզվամտածողության նոր տեսակի՝ **Էկոլոգիական լեզվամտածողության** կամ **լեզվամտածողության էկոլոգիայի** մասին («Էկոլոգիական լեզվամտածողություն» տերմինակապակցությունը ռուս լեզվաբաններինն է)⁵: Այսպես, օգնելով գիտակցել տարբեր հարցերի շուրջ ծագած հակասությունների սրացման մեխանիզմները՝ էկոլեզվաբանությունը փորձում է նպաստել տարբեր երկրների, նաև մի երկրի ներսում հասարակության և սոցիալական տարբեր համախմբերի պատկանող մարդկանց խաղաղ գոյակցությանը: Նշանակում է՝ էկոլեզվաբանությունը վերածվում է մարդկանց միջև հարաբերությունների, դիվանագիտական հարցերի կարգավորման հզոր գործիքի. քաղաքակիրթ անհատի իմաստուն բառն ու բանը (խոսք) կարողունակ է շատ բաներ փոխել-փոփոխելու ի շահ մարդկության բարօրության: Ավելին, լեզուն հանդես է գալիս իբրև միջմշակութային և ներմշակութային երկխոսության գործիք, իբրև շղթայակցող օղակ հասարակական, մշակութային և բնության (բնական) էկոհամակարգերի, դրանց կազմիչ էկոմասնիկների միջև:

Արդի էկոլեզվաբանությունը բաժանում են **մակրո** և **միկրո** տեսակների: **Մակրոէկոլեզվաբանությունը** ուշադրություն է դարձնում հասարակական, պետական, տարածքային համաշխարհային նշանակության հարցերին. **միկրոէկոլեզվաբանությունը** առաջին պլան է մղում լեզվախոսքային փաստերի և սովյալների ուսումնասիրությունը:

Էկոլեզվաբանությունը լեզուն և դրան վերաբերող հարցերն ուսումնասիրում է **լեզու – հասարակություն – միջավայր** բարդ փոխազդեցությունների շղթայում՝ հաշվի առնելով դրա յուրաքանչյուր օղակի դերն ու կարևորությունը: Շրջակա միջավայրի կենսաբազմազանության պայմաններում յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ իր շրջակա միջավայրի հետ փոխազդեցությունների բարդ համակարգով կապված է արտաքին և ներքին աշխարհների հետ: Էկո-

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 140:

լոգիական լեզվաքննությունը երևան է հանում ամենից առաջ լեզվակիր հասարակության խոսողության գործընթացի սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական լեզվաբանական տվյալներն ու փաստերը: Այնուհետև բոլոր իրողությունները նկարագրում է իբրև՝ **ա) փոխկապակցվածություններ** (ամբողջի յուրաքանչյուր միավոր կապված է մյուս միավորների հետ և ամբողջի հետ), **բ) փոխկախվածություններ** (լեզվական երևույթի գոյությունը փոխվում է, եթե այլ երևույթ դադարում է գոյություն ունենալուց), **գ) փոխազդեցություններ** (ոչ մի միավոր չի ազդում մյուսի վրա, եթե ինքը չի ազդվում մյուսի կողմից, չի ենթարկվում այլ ազդեցությունների. գոյություն չունի միակողմանի ազդեցություն. ազդեցությունը լինում է երկկողմանի, որը, սակայն, չի նշանակում համաչափություն և հավասարություն, քանի որ մի լեզու միշտ գերադաս (դոմինանտ) է մյուսի նկատմամբ):

Դասական լեզվադրյուններում էկոլեզվաբանական ուսումնասիրությունները երեք դիտանկյուններով են կատարվում՝

ա) միջլեզվական (ինտերլինգվալ). կապվում է բազմալեզվության, լեզուների մահացման և անհետացման խնդիրների լուսաբանման հետ,

բ) ներլեզվական (ինտրալինգվալ). կապվում է խոսքի նորմավորման, խոսքի մշակույթի, տեքստաբանության, ռճաբանության, ճարտասանության (հոետորաբանության) հետ և ներառում է ճշտության, հասկանալիության, տրամաբանականության, արտահայտչականության և խոսքի հաղորդակցական այլ առանձնահատկություններ,

գ) բազմալեզվյան (տրանսլինգվալ). լեզվի համատիրություն մեկ այլ լեզվի միավորների, իրակությունների ներմուծման, տարաշխարհիկ մշակույթների գեղարվեստական, բանահյուսական, հրապարակախոսական և այլ տարրերի գործածության (կիրառության) հարցեր է ուսումնասիրում:

Ներկա ժամանակներում էկոլեզվաբանության մեջ առանձնացնում են **լեզվի էկոլոգիա** և **խոսքի էկոլոգիա** ենթաճյուղերը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուսումնասիրության առարկան, հասկացական-տերմինաբանական մթերանոցը և ուսումնասիրության ուրույն մեթոդաբանությունը: Ժամանակակից լեզվաբանության համար կարևոր է դառնում վեր հանել ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի **լեզվի էկոլոգիական պատկերը**, այլև **խոսքի էկոլոգիական վիճակը**: Խոսքի մշակույթի էկոլոգիական քննակետը ներառում է նաև բարոյական դիտանկյունը (ասպեկտը)՝ ստեղծել հաղորդակցական այնպիսի միջավայր, որը չի վտանգի, չի նսեմացնի հաղորդակցվողների զգացմունքները, չի հակասի բարոյավարքային սկզբունքներին և ըմբռնումներին: Խոսքի էկոլոգիականության (մաքրության) աստիճանը որոշվում է լեզվակիր անհատի լեզվագործածական հմտությամբ և խոսք կառուցելու կարողականությամբ, ազգային կամ միջազգային ցանկացած լեզվամիջավայրում և հաղորդակցական ցանկացած իրավիճակում խոսքային գործունեության և խոսքային վարքագծի համապատասխանությամբ, ինչպես նաև խոսքի հասցեատիրոջ նույնատիպ ունակություններով, հավելյալ՝ վերջինիս ընկալողական և գնահատողական

արժեհամակարգով: Այսօր լեզվի և խոսքի գնահատման չափանիշային սանդղակում առանձնացվում է **Էկոլոգիական/ոչ Էկոլոգիական** գնահատականը՝ դրական Էկոլոգիականական միջավայր ստեղծելու (նաև՝ ոչ Էկոլոգիականը մերժելու) նպատակաուղղվածությամբ:

Քսանմեկերորդ դարում Էկոլոգիականությունը բուռն զարգացում է ապրում տարբեր ուղղություններով: Ամերիկացի, գերմանացի և ֆրանսիացի լեզվաբանները առանձնագրում են «Էկոլոգիական փոփոխականներ» կամ գործոններ, որոնք որոշում են սոցիալական խմբերի և անհատների լեզվական վարքը՝ առավելապես կարևորելով այն հանգամանքը, որ այդ փոփոխականները չեն կարող առանձին դիտարկվել. դրանք կապված են իրար հետ և կազմում են փոխազդեցական Էկոհամակարգ: Հարույր Հարմանն առանձնացնում է հասարակական խմբերի և առանձին անհատների վարքագծով պայմանավորված Էկոլոգիական յոթ փոփոխականներ՝ **ժողովրդագրական (դեմոգրաֆիական), սոցիալական (հասարակական), քաղաքական, մշակութային, հոգեբանական, ինտերակտիվ, լեզվաբանական**: Ըստ նրա տեսության՝ այս փոփոխակները հնարավոր չէ բաժանել. դրանք սերտ կապվածությամբ ստեղծում են «Էկոլոգիական համակարգ»: Հետևաբար, Էկոլոգիական համակարգը Էկոլոգիական յոթ փոփոխականների փոխկապակցվածությունն է:

Ի պատիվ Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր, արքեպիսկոպոս **Արսեն Այտընյանի** (1825-1902 թթ.)՝ պետք է նշել, որ դեռևս 19-րդ դարում հայ լեզվաբանը անուղղակիորեն արժարժել է Էկոլոգիականական հարցեր և ներմուծել է «լեզվի փոփոխիչներ» տերմինակապակցությունը՝ հար և նման «փոփոխականների»: Ըստ Ա. Այտընյանի՝ բնության խորհուրդն էլ խորհուրդ ունի. այն, ինչ ծնվում է, պետք է ապրի, իր նմանը առաջ բերի և մեռնի: Լեզվի խորհուրդն էլ խորհուրդ ունի. «Ծնանիլ, ապրիլ, իւր նմանը յառաջ բերել եւ մեռնիլ, ասոնք են մարդկութեան եւ անոր շատ իրողութեանցն էական վայրկեանները: Մարդկային խոսողութեան գործիքը՝ լեզուն, ան ալ հարկաւ այս չորեքպատիկ անցքերէն կանցնի»⁶: Հայտնի լեզվաբանը լեզվի մահացման հիմնական պատճառը համարում է չգործածվելը, լեզվի փոփոխության գլխավոր մղիչը՝ «մտաց» զարգացումը կամ նորանոր «գաղափարաց պէսպէսությունը» (կարելի է հասկանալ գիտության և տեխնիկայի նվաճումները), իսկ լեզվի գլխավոր փոփոխիչներ՝ «այլայլիչներ» է համարում քաղաքական իշխանությունը, կրոնը և գիրը: Նա չի բացառել նաև վարքութարքի, կենցաղային, բարոյական արժեքների ազդեցությունը լեզվի վրա: Նաև՝ պատմական դիրքը կամ քաղաքական անցքերը, աշխարհագրական դիրքով պայմանավորված տարածական հեռավորությունը, այլալեզու օտարների մեջ հայտնվելը, մայր ազգի

⁶ Այտընյան, Ա. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 31:

բուն մարմնից զանգված առ զանգված անջատվելը և վայրիվերո ցիրուցան լինելը, մի խոսքով՝ գաղթականությունը⁷:

Էկոլեզվաբանության խնդիրներն ու նպատակները

Էկոլեզվաբանության ուսումնասիրության առարկան լեզուն է՝ ազգային և համազգային լեզվամիջավայրերում, հոգեբանական և հասարակական-սոցիալական իրավիճակների հետևանքների ազդեցությունների խաչաձևումներում: Էկոլեզվաբանությունը զբաղվում է մի կողմից՝ լեզուների, մյուս կողմից՝ լեզվակիր անհատի և նրան շրջապատող միջավայրի փոխազդեցությունների ուսումնասիրությամբ: Այսպիսի մոտեցմամբ լեզուն դիտարկվում է որպես անփոխարինելի բաղադրիչ մարդու, հասարակության և բնության միջև փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների շղթայում՝ իբրև ազգային արժեք, ազգապահպանության վկայագիր և քաղաքակրթվածության հիմնական գրավական:

Եթե այս ենթաճյուղի սկզբնախնդիրը եղել է (և շարունակում է մնալ) նույն տարածքի բազմալեզու միջավայրում ազգային լեզվի պահպանության և մրցակցող լեզուների գոյատևման հարցերի ուսումնասիրությունը, ապա քսանմեկերորդարյա համայնապատկերում հիմնախնդիրների մի ողջ համակարգ է ձևավորվում.

- ներկայացնել լեզվական միջավայրի պատկերը, քննել լեզվական վիճակը,
- առաջարկել ազգային լեզուն կայունացնելու միջոցներ,
- կանոնակարգել լեզվական նորմի պահպանման և խոսքի մշակույթի ձևավորման նախապայմաններն ու գնահատման չափանիշները,
- վերականգնել հոգևոր-աշխարհիկ կապը,
- պահպանել **լեզու - մշակույթ - միջավայր - հասարակություն - անհատ** հարաբերակցության բնականոն հավասարակշռությունը՝ նպատակաուղղված եղծվածն ուղղելուն, խոտորվածը շտկելուն, աղտոտվածը մաքրելուն, անկանոնը կանոն դարձնելուն,
- ստեղծել լեզվի գիտակցական մաքրությունը (բայց ոչ մաքրամոլությունը) ապահովող պահպանության և պաշտպանության գործիքակազմ՝ ի նպաստ գիտական լեզվաշինության և ազգաշահ լեզվաքաղաքականության:

Հստակորեն տարբերակելով **բնության, մարդու էկոլոգիա** և **լեզվի էկոլոգիա** տերմինակապակցությունները՝ անհրաժեշտ է դառնում նշել դրանց լեզվաբանական հիմքերը: Առաջին դեպքում լեզուն հանդես է գալիս իբրև պաշտպանության օբյեկտ սոցիալական և բացասական (նեգատիվ) ազդեցություններից, երկրորդ դեպքում մարդը, որպես ուսումնասիրության օբյեկտ, գտնվում է լեզվական, խոսքային, տեքստային տեղեկատվական միջոցների ազդեցությունների տիրույթում: Այս դեպքում լեզվի պաշտպանության և պահպանության չափանիշները կիրառվում են տարբեր մոտեցումներով՝ սկսած լեզվական

⁷ Տե՛ս նույն տեղը:

միավորներից (բառ, օտարալեզու միավորներ, հնացող բառամիավորներ, ժարգոնիզմ...), լեզվական կառույցներից, խոսքի նորմերից (խոսքի մշակույթ, հաղորդակցման մշակույթ, հաղորդակցական էթիկա, խոսքի տեղիություն և պատշաճություն և այլն) մինչև բանականության, գիտակցության, վերլուծական-քննադատական մտածողության տիրույթները:

Էկոլեզվաբանությունը ուսումնասիրում է նաև լեզվի աղտոտման աղբյուրները, «աղտոտված» լեզվի պատճառով գիտակցության «ախտահարվածության» կնճռոտ խնդիրներին լուծումներ գտնելու ուղիները: Համացանցային շփումների գերակտիվության, համաշխարհային հաղորդակցման շուկայի ընդլայնման, տեխնոլոգիաների հարաճուն առաջընթացի, անգլերենի՝ միջազգային շփման կողմի վերածվելու, բանավոր կամ խոսակցական լեզվի՝ տեխնոլոգիական նոր պահանջներին հարմարվելու շտապողականության, պարզ ու հասարակ մտածական-հաղորդակցական կաղապարները գերադասելու համայնապատկերի վրա մտահոգիչ են դարձել ամենուր հնչող այսպիսի անհագանգերը. «Նոր տեխնոլոգիաները, սոցցանցերը փլուզում են մարդու ներուժը, զգայագուրկ են դարձնում նրան», «Մարդկանց ամենաթանկ բանը՝ մտածելու ունակությունը, գողացված է տեխնոլոգիաների կողմից», «Նոր աշխարհը վերափոխելու կոչված սերնդի կողմից լեզուն վերածվում է միակողմանի գործածության սառը գործիքի (հավանաբար «տեխնիկերեն»): հասկացության անվանումը մերն է), «Վտանգված է հոգևորի և արտաքին աշխարհի ներդաշնակության կապը», «Լեզվում շրջում է գործարարության (բիզնեսի) պաշտամունքի «ստվերը», «Գրական լեզուն նահանջում է՝ տեղը զիջելով խոսակցական տարբերակին՝ լցունված «հիբրիդային» լեզվամիավորներով», «Լեզուն դառնում է մարդու «գոհը», «Թունավոր արհեստական բանականությունը կառավարում է աշխարհը» և այլն: Այսպիսի աշխարհալեզվաիրավիճակում խոսքիմշակութային արժեքների կորստյան ճանապարհին շտապ օգնության է հասնում էկոլեզվաբանությունը՝ իբրև կանոնակարգող, լեզվապաշտպանիչ (=ազգապաշտպանիչ), լեզվապահպանիչ (= ազգապահպանիչ) գործիք:

Այսօր գիտության աշխարհում էկոլեզվաբանությունը լայն քայլերով առաջ է գնում՝ **մարդ-հասարակություն-բնություն** ներդաշնակ զարգացման պահանջներին համապատասխան: Քսանմեկերորդարյա էկոլեզվաբանների հետազոտությունների կիզակետում այնպիսի հասկացություններ են, ինչպիսիք են՝ **միջավայր, հաղորդակցության էկոլոգիական միջավայր, գիտակցություն և հոգեբանական ներաշխարհ, մարդու հոգևոր առողջություն, ոչ խոսքային վարք, բնական խոսք, արհեստական խոսք, լեզվական կատարելություն (իդեալ), խոսքային իրադրություն, լեզվակիրների խոսքի էկոլոգիա, լեզվական ու խոսքային նորմից շեղումներ, լեզվական նորմի փոփոխություններ, լեզվի պաշտպանվածություն, լեզվի «առողջացում», լեզվական ճաշակ, լեզվական նորաձևություն, լեզվական բռնաճնշում, լեզվական մանիպուլյացիա, լեզվի մուտացիա, լեզվական դաստիարակություն, լեզվական քաղաքականություն,**

«լեզվական միջավայրի էկոլոգիական բազմազանություն», «հնդեվրոպական կամ այլ լեզուների էկոլոգիական բազմազանություն» և այլն: Կարելի է ասել՝ էկոլեզվաբանների ջանքերով ստեղծվել է էկոլոգիական տերմինների բաց համակարգ: Այսօր այս համակարգում իրենց տեղն ունեն (թեպետև դեռևս մուտքագրված չեն) նաև արհեստական բանականությանը և նրա մաքրությանը վերաբերող տերմինները: «**Արհեստական բանականություն**»-ը ժամանակի ամենապահանջված գործիքն է, հետևաբար էկոլոգիական ամենաարդիական պահանջն է արհեստական բանականության էկոլոգիայի հարցերին անդրադառնալը, հակառակ դեպքում դրա աղտոտումը, որ դամոկլյան սրի նման կախվել է Երկիր մոլորակի գլխին, կարող է հարցականի տակ դնել մարդկության գոյությունը՝ հասցնելով ինքնադաշնաման: Թե ի՞նչ դերակատարում կունենա էկոլեզվաբանությունը արհեստական բանականության տիրություն, կկարողանա՞ մաքրագործման դեր ստանձնել **բնություն - մարդ - բանականություն - արհեստական բանականություն** սահմանագծում, էկոլոգիական և էկոլեզվաբանական աշխատանքների արդյունքում այն կմաքրվի՞ թունավոր բծերից («**թունավոր արհեստական բանականություն**»), կծառայի՞ մարդկությանը որպես «**ընկերական արհեստական բանականություն**», ցույց կտա «**Մեծն ժամանակը**»:

Էկոլեզվաբանությունը նպատակաուղղված է նաև լեզվակիրների լեզվական և էկոլեզվաբանական դաստիարակության խնդիրների լուծմանը: Այն կարևորում է **լեզվաբանական գիտությամբ զբաղվողների խնդիրն** այն պարզ պատճառաբանությամբ, որ **լեզվի թուլանալու պատճառը թերակատար քնությունն է**: Էկոլեզվաբանական ուսումնասիրությունների արդյունքում ձևավորվում է հոգատարությունը կամ խնամքը լեզվի՝ իբրև մարդու հոգևոր արժեքի նկատմամբ: Լեզվի մշակույթի հարցերի նկատմամբ էկոլոգիական մոտեցումը ենթադրում է նաև մայրենի լեզվի նկատմամբ սիրո դաստիարակություն, պատասխանատվության բարձր զգացմունքի սերմանում լեզվի անցյալի, ներկայի և ապագայի համար: Էկոլեզվաբանության հիմնական կրթօջախը դպրոցն է. այնտեղ են սովորում **ըստ օրինի խոսել, սիրել ու պահպանել, գնահատել և արժևորել մայրենին**: Էկոլեզվաբանության առարկայի և խնդիրների մեջ մտնում են ոչ միայն լեզվական միջավայրի՝ ամենատարբեր աղտոտվածություններից և վարակներից պահպանման և մաքրության հարցերը, այլև պայքարը լեզվաբանական նիհիլիզմի դեմ, որը ուղղակիորեն բացառում է կամ թերագնահատում է լեզվական կրթվածության դերը, որն ընկած է ժամանակակից քաղաքակրթության հիմքում: Այս խնդիրները չեն վրիպել նաև հայ լեզվաբանների կողմից, որոնք ևս ինչ-որ չափով անդրադարձել են դրանց՝

⁸ Տե՛ս **Սարգսյան, Լ.** Լեզվաբանության զարգացման որոշ միտումների մասին // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, № 15, 2016, էջ 101-108, **Սարգսյան, Մ.** Էկոլեզվաբանությունը լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն // Լեզու և լեզվաբանություն, № 2, 2017, էջ 55-60, **Հարությունյան, Ն.** Միջմշակութային հաղորդակցման **Հարությունյան, Ն.** Միջմշակութային հաղորդակցման տեսության զարգացման համառոտ պատմությունը // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, № 1-2 (20), 2016, էջ 111-126:

Այսպիսով՝ էկոլոգվաբանությունը կոչված է տալու լեզվի զարգացման օր-
յեկտիվ պատկերը, լեզվակիր հասարակությանը զգուշացնելու լեզվին սպառ-
նացող վտանգների, դրա աղտոտվածության մասին և այս կերպ խնամք ու հո-
գատարություն ցուցաբերելու գրական լեզվի ճակատագրի, մարդու և հասա-
րակության խոսքային միջավայրի հանդեպ: Մեզանից յուրաքանչյուրիցս այս
կամ այն չափով կախված է մեր գոյության միջավայրի, նաև լեզվական միջա-
վայրի էկոլոգիական մաքրությունը:

АНАИТ АДИЛХАНЫЯН, ЗАРИК АГАДЖАНЫЯН – Эколингвистика в основе научного языкового строительства и национально ориентированной языковой политики. – В статье рассматриваются вопросы, связанные с новым направлением лингвистики – эколингвистикой. Язык, как национальная экзистенциальная система и формула национального мышления, определяется не только языковым сознанием и мировоззрением носителя языка, но и взаимосвязью и взаимодействием между языком, человеком и окружающей средой. В этой многоуровневой цепи окружающая среда оказывает непосредственное влияние на речевую деятельность человека. Естественно, если речь идет о сохранении природной экосистемы, необходимо также обратить внимание на чистоту и сохранность одного из ее неотъемлемых компонентов – языка, как врожденной способности человека. Экология языка схожа с экологией окружающей среды, так как в обоих случаях движущей силой являются принципы сохранения и восстановления гармонии. В 21-м веке становится необходимым акцентировать внимание на новом типе языкового мышления – экологическом языковом мышлении, которое предполагает рассмотрение языка как незаменимого компонента взаимодействия человека, общества и природы. В этом контексте экология языка выступает инструментом защиты языка от социальных и негативных влияний. Эколингвистика исследует источники загрязнения языка и ищет пути решения этих сложных проблем. Она призвана представить объективную картину развития языка, предупредить носителей языка о существующих угрозах и его загрязнении, а также проявить заботу и внимание к судьбе литературного языка и речевой среды человека и общества.

Ключевые слова: эколингвистика, экологическое мышление, человек, общество, природа, носитель языка, экология языка и слова, движущая сила, гармония, окружающая среда.

ANAHIT ADILKHANYAN, ZARIK AGHAJANYAN – Ecolinguistics at the Core of Scientific Language Construction and Nationally Oriented Language Policy. – The article addresses issues related to a new branch of linguistics–ecolinguistics. Language, as a national existential system and a formula of national thought, is determined not only by the linguistic cognition and worldview of the individual speaker but also by the interrelationship and interaction between language, humans, and the environment. In this multifaceted chain, the surrounding environment directly influences human speech activity. Naturally, if the preservation of the natural ecosystem is being discussed, attention should also be paid to the purity and preservation of one of its integral components–language, as an innate human capacity. The ecology of language is akin to environmental ecology, with both operating under the guiding principles of maintaining and restoring harmony. In the 21st century, it is crucial to emphasize a new type of linguistic cognition–ecological linguistic thinking–which involves viewing language as an irreplaceable component in the interplay between humans, society, and nature. In this context, the ecology of language serves as a tool for protecting language from social and negative influences. Ecolinguistics investigates the sources of language pollution and seeks solutions to these complex

issues. It aims to provide an objective picture of language development, warn linguistic communities of threats and pollution endangering the language, and thereby foster care and attention toward the fate of literary language and the speech environment of humans and society.

Key words: *ecolinguistics, ecological linguistic thinking, humans, society, nature, individual speaker, language and speech ecology, driving force, harmony, environment.*

Գրականության ցանկ

- Այտընյան, Ա. (1987): Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 866 էջ: (Aytēnyan A. (1987). *K'nnakan k'erk'anakut'yun ashkharhabar kam ardi hayeren lezvi*. Yerevan, 866 ej.).
- Հարությունյան, Ն. (2016): Միջմշակութային հաղորդակցման տեսության զարգացման համառոտ պատմությունը // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, № 1-2 (20), էջեր 111-126: (Harutyunyan, N. (2016). *Mijmshakut'ayin haxordakut'yan tesut'yan zargats'man hamarrot patmut'yun* // *Otar lezunerē bardraguyn dprots'um*, № 1–2 (20), ejer 111–126).
- Ջահուկյան, Գ. Բ. (2015): Լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 612 էջ: (Jahukyan, G. B. (2015). *Lezvabanut'yan patmut'yun*, h. 2, Yerevan, 612 ej).
- Սարգսյան, Լ. (2016): Լեզվաբանության զարգացման որոշ միտումների մասին // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, № 15, էջեր 101 – 108: Sargsyan, L. (2016). *Lezvabanut'yan zargats'man orosh mitumnere masin* // *Otar lezunerē bardraguyn dprots'um*, № 15, ejer 101–108).
- Սարգսյան, Մ. (2017): Էկոլեզվաբանությունը լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն // Լեզու և լեզվաբանություն, № 2, էջեր 55-60: Sargsyan, M. (2017). *Ekolezvabanut'yunē lezvabanut'yan zargats'man noraguyn ughxut'yun* // *Lezu yev lezvabanut'yun*, № 2, ejer 55–60).
- Нурушева, Д. А. (2014). Эколингвистика как раздел языкознания // Фундаментальные исследования. № 5 (часть 4). С. 890-893. (Nurusheva, D. A. (2014). *Ekolingvistika kak razdel yazikoznaniya* // *Fundamental'nye issledovaniya*, № 5 (chast' 4), s. 890–893).
- Шляхов, В. И., Никонов, А. Л. (2011). Эколингвистика и проблема экологии языка в российском языковом пространстве // Пространство и Время. № 4(6). С. 138-144. (Shlyakhov, V. I., Nikonov, A. L. (2011). *Ekolingvistika i problema ekologii yazyka v rossiyskom yazykovom prostranstve* // *Prostranstvo i Vremya*, № 4(6), s. 138–144).